

ՄԱՍԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Масакъ“.
Կամ Tiflis, Redaction „Maschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցիտով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաւրանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գէպի մենավաճառութիւն. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Ղուբայից. Նամակ Աստրախանից. Նամակ Երևանից. Նամակ Խժմ-բազրութեան. Ներքին լուրեր. — ՍՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հին ուրուականը.

ԴԵՊԻ ՄԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մշակի երեկոյ համարում մենք մատնացող եղանակ այն բարեբար հետեւաների վրա, որ տուել են աշխատողներին և մանր արհեստագործներին ընկերակցութիւնները: Մենք ուրախութիւն յայտնեցինք, որ այդպիսի ընկերակցութիւններ բազմա-նում են և որ նրանք արդէն կազմել են խիտ ցանցեր եւրոպական մի քանի երկր-ներում: Այսօր մտադիր ենք դարձնել մեր ընթերցողներին ուղարկութիւնը մի ուրիշ շարժման վրա, որ նոյնպէս հիմնված է համարման, միութեան և ընկերակցու-թեան վրա, բայց բոլորովին հակառակ դի-տուեցողութեան և կազմակերպութեան տարբեր ձևերով: Մեր խօսքը այն խոշոր դաշնակ-ցութիւնների մասին է, որ սկսել են կազմ-վել Եւրոպայում և մանաւանդ Ամերիկա-յում մեծ ընկերակցութիւններին և ար-դիւնագործական ֆիրմաներին մէջ: Այդ դաշնակցութիւններին նպատակն է վաճա-ռանքները ձեռք առնել և գնելի վրա տեղ դառնալ, ոչնչացնելով մրցութիւնը և այդ մրցութեան հետ կից ապրանքների էժանացումը:

Թէ ինչ խոշոր կապիտալներ են կազմ-վում այդ եղանակով կարելի է եզրա-կացնել այն նոր դաշնակցութիւննե-րից, որոնք ծրագրվել են վերջին ամիս-

ներում: Պղնձեայ հանքերի շահա-գործութեամբ և պղնձի առևտրով պա-րագող եթ ընկերութիւն ամբողջովին և երեք ընկերութիւն յայտնի մասով միացել են և կազմել մի ընկերութիւն 75 միլիոն դոլլար, կամ մօտ 150 միլիոն ռուբլի դրա-մագլխով: Մետաքսի սինդիկատը կարողա-ցել է գրաւել մինչև 200 միլիոն ռուբլու գումար: Վելոսիպեդի գործարանների միու-թիւնը ժողովում է 140 միլիոն ռուբլի: Իսկ պողպատի դաշնակցութիւնը անհրա-ժեշտ է համարել միացնել առնուազն 1000 միլիոնի կամ մի միլիարդ ռուբլու գումարով: Այդպէս է և ուրիշ խոշոր արդիւնագործութիւնների մէջ:

Հասկանալի է, որ այդպիսի խոշոր կա-պիտալները շատ հեշտ կերպով ոչնչաց-նում են մանր մրցակիցներին և նուաճե-լով ամբողջ վաճառանքը, իրանք են դառ-նում գնելի թելադրող և առուծալի կարգադրողը: Այդպիսի կազմակերպու-թիւնները կամաց-կամաց սկսում են ազ-գային արդիւնագործութեան ամբողջ ձիւ-ղերը ենթարկել բացառիկ ազդեցութեան և հաստատել մենապաճառութիւն:

Ճիշդ է, այդ մենապաճառական ձգտումների մէջ պատահում են և սոսկալի վնասու-թիւններ: Յայտնի Լէյսեր, որ երկու տարի սրանից առաջ, օգտվելով սպանո-ամերի-կական ընդհարումից, ժողովել էր մեծ քանակութեամբ ցորեն և բարձրացրել ան-տեղի կերպով նրա գինը, պատժվեց սոս-կալի կերպով և անուղղելի վնասներ կրեց: Բայց դաշնակցութիւնների մեծ մասը չէ վնասվում, այլ ընդհակառակը օր օրի վրա ուժեղանում է և երկաթեայ շղթաներով կաշկանդում արդիւնագործներին և սպա-ռողներին: Այդ խոշոր դաշնակցութիւննե-րի կամ տրէստները ազդեցութիւնը շուտով կը հասնի և մեր երկրին և մեր

նաւթագործները, հանքադէրերը, շերա-մապահները, բամբակագործները և ուրիշ արդիւնագործողները կը զգան ուժեղ կազ-մակերպութեան հեռաւոր հարուածները և Սահայի խորքերում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Երբեմն երբեմն, թէ և շատ քիչ, ինչպէս ա-տու է հազարից մի անգամ, մասուլի մէջ գործողները թափանցում են կենքի ամենա-մուկ խորքերի մէջ և դուրս են հանում այնտեղից այնպիսի նկարագրութիւններ, որոնց իւրաքանչիւր տողը յուսահատութիւն, դառն վիշտ է պատճառում: Ինչպէս, ինչ կեղտեր ա-ստ, որ թափված չը լինի ժամանակակից հա-սարակութեան մէջ, որ արտաբնական այնքան յղկված և գեղեցիկ է, որ պարծենում է իր դարով և նրա փայլուն թէթոններով: Այդ բանը տեսնելու համար մի քանի փոխադրվեցէք կովկասեան Սօքոմը, մեր հոշակաւոր Բագուն, որը դրամական փայլի տակ թափված է ժա-մանակակից առևտրական խոշոր կենտրոնի բա-րոյական դոմբը: «ԲԱՑՈՒՄ» լրագրի աշխատակի-ցը ծանօթացնում է մեզ հասարակական մի նոր, դեռ անձանթ խոյի հետ: Եւ դա... ան-չափահաս երեխաների պոռնիկութիւնն է: Ահա մի զոյգ փոքրիկ արարածներ, որոնք արդէն «կին են դառնում»:

Ձեր առջև կանգնած է մի կատարեալ երե-խայ, պարզ մանկական հայեացքով, դէմքի մանկական գծերով: Բայց ահա այդ երեխան իստեց, և դուք տեսնում էք, որ դա կին է: Սա խօսում է այնպիսի բաների մասին, պա-տահանում է այնպիսի հարցերի, որոնք ան-մատչելի են սովորական երեխաներին: Այնու-ամենայնիւ, դուք դարձեալ տեսնում և զգում էք, որ դա երեխայ է և ոչ թէ կին: Բայց ե-րեխայ, որ փչացել է բարոյապէս, կամ աւելի ճիշդ ասած, հասկացողութիւն չունի բարոյա-

կանութեան մասին, որովհետեւ իր արարածները նա ոչ լաւ է համարում, ոչ վատ:

— Չես ամաչում, որ այդպիսի բաներ ես անում, հարցրի ես:

— Ոչ, պարզապէս պատասխանեց նա: Եւ իրաւ, նրա դէմքի վրա ոչ ամօթ էր նը-կատվում, ոչ նոյն իսկ դարձանք, որ այդպիսի հարց են տալիս: Պարզ էր, որ հարցը նոյն իսկ նրա ուշադրութեան չարժանացաւ, և նա պատասխանեց միայն այն պատճառով, որ սովորել է պատասխանել ամեն տեսակ հարց-մունքներին...

Եւ այդ երեխաները 11 տարեկան են: Բայց ահա բացվում է ձեր առաջ ուրիշ տեսարան: Այս անգամ մարմին ծախող երեխաները մի այլ զոյգ են կազմում: 10—11 տարեկան: Նրանք հայր ու մայր էլ ունեն, եկել են Վոլոյայի ա-փերից մուրացկանութիւն անելու: Նախապէս մայրաքաղաքում երկու փոքրիկները ընկնում են բարոյական ցեխի մէջ: Եւ նորից մի և նոյնը:

Իրանց տխուր արհեստին նրանք նոյնպէս անտարբերութեամբ են վերաբերվում, ինչպէս և նախնիքաց երկուսը, պատում են բոլոր ժանրամասնութիւնները, բոլորովին չաժաշե-լով, կարծես ամենահասարակ բաների մասին է խօսքը:

— Իսկ ինչու չէք դնում ծառայելու:

— Հայրիկը չէ հրամայում. ասում է ինչ կը տան ձեզ, ընդամենը երեք մի ռուբլի ամ-սական, իսկ այսպէս ամեն մէկը վեց ռուբլի կաշխատեմ...

Այդպէս, այս դէպքում երեխաներին տը-խուր ճանապարհի վրա պահում են իրանք, ծնողները...

Մի քայլ էլ անենք լրագրի աշխատակցի հետ և այս անգամ բոլորովին ուրիշ տեսարան է բացվում: Պոռնիկութիւն անող երեխան մի քիչ մեծ հասակի տէր է, նա 13 տարեկան է: Նա էլ, նախնիքաց երկուսի նման, ունի հո-վանաւոր:

Աղջիկը ապրում է Սև քաղաքում, բայց համարեա ամեն երեկոյ հովանաւորը տանում է նրան Բագուն, մտնում է «տնիկից» մէկը և թողնում է այնտեղ երկու երեք ժամով, իսկ ինքը կանգնում է մի որ և ինչ տեղ, սպա-

րուականը. երկար մամանակ նա թափված էր մոխրի տակ և յանկարծ կանգնեց լրագրիչների դէմ մարտնչելու, մի բան, որ մտքով անցկաց-նել անգամ չէին կարող Սերժանի տգէտ միա-բարները: Երկուսը նորանշան է— ունի թոռու-թիւն fin de siècle, բայց միջոցը, դէպքը հին է, շատ հին, այդպէս որ միակ աղջեցնող հան-գամանքը 1899 թվականն է, որ որոյմիշտ է գրքոյի վրա: Հեղինակը— անուանեց նրան անյայտ, թէ և դժուար չէ գուշակել թէ ով է— երկու գլխաւոր միտք ունի. 1) փառաբանել հայ կաթողիկոսի պատրիարք Աղաբանին և 2) հաւատացնել, որ Վանի հայերը Ջնոյանի լրու-նանքով չեն գնված, այլ պարզապէս վերա-դարձել են իրանց նախնիների եկեղեցու գիր-կը, որովհետեւ բոլոր նախնիները, Գրիգոր Լու-սաւորչից սկսած մինչև VI դարը զուտ կաթո-լիկներ էին:

Աղաբանն պատրիարքը նոր մեռաւ, և մենք չենք ուզում երկար խօսել այդ անկասկած ըն-դունակ կրօնաւորի մասին, որ Հռոմի պատ-րաստած գործիչների մի ընտրոյ տիպն է ներ-կայացնում, այսինքն աւելի դիպրոմատ, քան հո-գևոր իօվլի, աւելի չաճ ու տիրապետութիւն որոնող, քան բարեկարգող, ստեղծագործող: Չենք ուզում յիշատակել թէ ինչ դեր կատարեց Աղաբանը Հասունի խառնակութիւնների և մա-նաւանդ վերջին կոտորածների ժամանակ. բա-նական է և այն հանգամանքը, որ պապական-ութեան այդ մոլեռանդ ախպրանք համարու-թիւն չէր վայելում նոյն իսկ իր հօտի կողմից: Մարդու դատաւորը նրա գործերն են և ոչ թէ ստորագրեալների չորհրդերը ներգրողները. անա-չառ պատմութիւնը դիտէ իր գործը կատարել...

Գալով երկրորդ կէտին, մենք պարտք ենք համարում քիչ երկար կանգ առնել: Ձր մտնելով այն ահեղ լարերին թոյնի մէջ, որ սխալատեղ աստուածաբանութիւնը կառուցել է տանեակ դարերի ընթացքում և որի մէջ այժմ խաբիա-փում են ուղղափառութեան անունով անհաշտ խմբերի բաժանված 490 միլիոն բրիտանեա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԻՆ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

XI

Ընդհակառակն: Արդեօք հասարակ զուգարի-պութիւն էր, թէ մի զարմանալի կանխատեսու-թիւն, որ 1894 թի դեկտեմբերին, Սասունի կոտորածից մի քանի ամիս յետոյ, հրատարակ-վեց պապի կողմակը՝ կաթողիկոսութեան յարած արևելեան եկեղեցիների իրաւունքների մասին: Իսկ խաղաղ նուաճումների մի նշանաւոր ծրա-գիր էր, որ կարող էր պատու բերել Հռոմի նրբամտութեան: Հասկացած լինելով թէ ինչ անողին նշանակութիւն ունի ազգայնական տարբեր իւրաքանչիւր ժողովրդի կենցաղակա-րութեան, հաւատալիքների մէջ, պապը ամեն մի եկեղեցու ծխական ինքնուրոյնութեան ջա-տագով է հանդիսանում և կատարեալ ազատու-թիւն է տալիս, որ արևելեան ամեն մի եկեղե-ցի լինի բուն ազգային, իր սեփական լիզուով, իր ունեւորեալ եպիսկոպոսներով ու քահանանե-րով և միանգամայն զրկում է լատին կրօնա-ւորներին խառնվելու, հովուելու իրաւունքից, պահպանելով նրանց համար լոկ օգնականների, աշակերտների դեր: Այդ իմաստուն քաղաքա-կանութիւնը լայնարձակ ասպարէզներ էր բաց անում կաթողիկ եկեղեցու համար. նուաճումը չէր պահանջում քանդել մի ժողովրդի դարաւոր հաւատալիքների չէքը, բռնութիւն, օտար, խրանցնող ոյժ չէր մտցնում:

Ապաքէն դժբախտութեամբ բաժանեալ քրիս-տոնեայ ազգաց մէջ զանազինք նախ և յառաջ արևելեաններն հրաւիրել, յորդորել և թախան-ձել մեր առաքելական և հայրական սիրոյն ա-մենաբն դօրութեամբ,— ասում է կոնդակը:— Նորածին յուսոյն օր ըստ օրէ աւելի արծար-ձելի կարի իսկ հեշտ եղաւ մեզ, և հաստատ

որոշած ենք մեծաւ փութով հետամուտ ըլլալով մայրեան փրկաւոր գործող մը, որպէս զի ինչ որ Առաքելական Սթոնայն յառաջատես խնամակա-րութեան կարելի է ակն ունել, լի բովանդակ կատարենք՝ ոչ միայն ատելութեան և կամ կառ-կածանաց պատճառները բաժնալով, այլ և հաշ-տութեան ամեն լաւագոյն միջոցները հայթայթ-թելով: Ամենակարևոր կը համարենք մեր մտադ-րութիւնն ու խնամքն նուրբ լինելով պահպա-նութեան արևելեայ սեփական եկեղեցական կարգաւորութեան՝ զոր միշտ մեծապէս պա-տուած և յարգած ենք: Լինա XIII ցանկու-թիւնն է և այն, որ կաթողիկ քահանայութիւնը գերազանց գիտութեամբ և անարատ օրինա-կաց հանդիսւ պայծառանալով, բաժանեալ եղ-բարք աւելի յօժարամիտ դիմեն ի գրկախառ-նութիւն մի և նոյն մօր: «Բայց առատութիւն պտղոյ՝ դուրս արժան է անտի ըրձալ և ամե-նայն իրաւաբեք սպասել, ձեռք պիտի բերուի նա մանաւանդ անոնց վատտակովն, որք մեր անձը կը ներկայացնեն ի քրիստոնեայ Արևելս: Վասն այսօրիկ պիտաբոյն կը յանձնարարենք առաքելական նուիրակաց՝ որ պարտուպատշաճ պատուով յարգեն այդ ազգաց ի նախնեաց ան-տի աւանդեալ կարգերն և կանոններն:

Իբրև ծրագիր, իբրև խրատ ոչինչ պակասու-թիւն չունի այդ ձեռնարկութիւնը: Բայց բա-րեբախտաբար թէ դժբախտաբար, քաղաքագի-տական նրբամտութիւնը դիւանաւորներն նեղ և անհոգի աշխարհում է յաղթում: Իսկ այնտեղ, ուր կանգնած է ժողովուրդների կոյտը, պա-հանջվում է ոչ թէ ձև, այլ հոգի, ոչ թէ խա-ղեր, ոչ թէ սոխակի երգեր, այլ կենդանի, ժո-ղովրդական գործ: Սակայն կաթողիկ եկեղեցին վաղուց է լոկ ձև դարձել, նրա բարոյացումը դեռ Հռոմին այրելու ժամանակից է անխալա- և այժմ բարձր հոգեբանականութեան համար իշ-խանապետական մի գործիք է: Իդուր չէ ձևի Զօլան իր երեք նշանաւոր վկայերի մէջ ման ա-ծում կաթողիկ քահանայ Պիերին, որ հարիւր ու մի անգամ ընդհարվում է այնպիսի դէպքե-

րի հետ, որոնք միաբերան գոռում են թէ կա-թողիկութիւնը հնացած ձև է, կենսաբեք յետ մնացած, սննդաբար հիւթերից զրկված և հա-ւատ ներշնչելու կարողութիւնն անգամ չունի:

Փաստերը պակաս չեն: Ամենակաթողիկ, ա-մենաթաքմ— Վանում բացված հոգեվաճառ շուկան...

XII

Լեոնի կոնդակը, ինչպէս տեսանք, նկատի ու-նի սիրով, համաձայնութեամբ, համադրուեցով միանալու եղանակը: Բայց Հռոմի պրօպագան-դան գիտէ, որ դա թէօրիա է. գործնականը այն բանն է, որ սովորական օրսորդները անուա-նում են բախտ, իսկ հոգեւորները— խախտա-մութիւն: Իօմինիկեանները բացականչում են, որ իրանք Վանում տանեալը տարի սպասում էին նախախնամութեան: Խոտովանեց, որ դա միայն վարժված օրսորդներին յատուկ համբե-րութիւնն է: Դարաւոր փորձ պապերից աւելի անխալապէս է. նա ցոյց է տալիս, որ գործը հիմնալի կերպով աշղղվում է համատարած դժ-բախտութիւնների ժամանակ, երբ ժողովուրդը, մանաւանդ անձաք ժողովուրդը, որ ազէտ ու անշնորհք առաջնորդներ ունի, թուլանում է, կազմալուծվում, կորցնում է բարոյական յեռա-կէտերը: Դաշտում մերկիկն մատնված ոչխարնե-րի հօտը սարսափահար վաղում է, չիմանալով կենք պահպանելու համար կորցնել է տալիս ճանապարհի, ուղղութեան հասկացողութիւնը և ըջում է դէպի անդունդներ, դէպի ծովը, ուր ապրելու տենչը գերեզման է դառնում հազար-ների համար: Որսորդներին շատ լաւ յայտնի է այս հօտային հոգեբանութիւնը. և անախալա պղտուրները նրանց համարձակութիւն, նոյն իսկ յանդգնութիւն է ներշնչում:

Բոլոր Ջնոյաններին յափշտակած այդ որ-սորդական ինքնագործութեան մի նմուշն է ոմն Մ. Վ. Ա.— Վեր սուրբ հարց դաւանութիւնը՝ անտնով բրօշիւրը, որ նորբա լոյս տեսաւ Կ. Պոլսում: Ապրում է, այո, մեր հին, սնեքս ու-

այդ արդիւնքով ապրիլ ամսնայր է, եթէ մանաւանդ աչքի առաջ ունենանք բաղադրում տիրող թանգուծիւնը: Թողովը վճռեց տալ ռոճիկը եկեղեցու սպասարաններին տարեկան՝ 150 ռուբլի:

Մեր տիրացուները, միայն մէկի բացառութեամբ, կանգնած են կրթութեան այնպիսի ոլորտներին աստիճանի վրա, որ եթէ այդ ասպարէզից դուրս լինէին, այդքան ռոճիկն էլ չէին ստանայ: Ուստի մի քանիսը առաջարկում էին չափաքան տիրացուների ռոճիկը:

Բայց մենք հարցին նայում ենք ուրիշ տեսակետից: Այստեղ սկզբունքի խնդիր է՝ պէտք է մոյլնել ռոճիկով վարձատրութեան միակ հասկանալի սովորութիւնը, պէտք է այդ ողորմելի տուրքերի հին, փառած սովորութիւնը ոչնչացնել, որովհետեւ այդ ձեռք կարկառելը ստորացնում է մարդու զգացմունքը, դարգացնում է երեսպաշտութիւնը, բնութիւնը, մի բան, որ երբեք ցանկալի չէ: Այդ վարձատրութեան ձևը պիտի դորձադրել է քահանաների համար: Չենք ժխտում, որ նրանք աւելի ապավին են ծուխ ունենալու շնորհիւ, բայց վերա յիշած սկզբունքից թելադրված՝ պէտք է վերջ տալ այդ ձեռք մեկնելուն, մանաւանդ որ ամեն մի կրթված քահանայացու շատ էլ հեշտութեամբ չի հաշտվում ձեռք մեկնելուն: անվայել սովորութեան և մենք այդպիսով պատժում ենք դաւանում, որ ասպարէզից հեռանա կրթված քահանայացուները. բացի այդ քահանաների ներկայ արդիւնքը երբեք չէ հասնում առասպելական այն չափին, ինչ որ կարծում ենք: Հնարարւում է, առաջվան քահանաները ձեռք են բերել քահանայ տներ, դիպել են հազարներ, բայց այնպիսի հեռուոր և կողմնակի միջոցներով, որ ոչ մի աւանդութիւն չէ ունեցել ծիսակատարութիւնների տուրքի արդիւնքի հետ, այլ արվել է մեծ մասամբ վերին աստիճանի անհամակարգի ձևերով, ձևեր, որոնց ներկայ նոր ֆորմացիայի հոգեբանականները երբեք չեն դիմի: Ահա թէ ինչու մենք գտնում ենք ռոճիկով վարձատրութեան ձևը միմիայն արդար ապահովութիւն: Այդ տեսակետից վերաբերվելով ինչդրին, մենք ողջունում ենք մեր հասարակութեան արած առաջին քայլը՝ այդ ասպարէզում: Հնարարւում է, այդ ժողովի վճռով դեռ բոլորովին չէ վերանում մուրալու սովորութիւնը, բայց մի աստիճան մեզ առաջ է տանում դէպի այդ ցանկալի կէտը: 8. Սօլ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մայիսի 10-ին

Մէկ շաբաթ է, ինչ այստեղ է եկել Բագրի հայ դերասանական խմբի մի մասը և տուել է արդէն երկու ներկայացում: Երբոր տարին է, որ այդ դերասանները յաճախում են մեր քաղաքը, և երևանցիք պէտք է որ լաւ ճանաչէին բոլորի ոյծերը և արժանաւորութիւնները. այնու ամենայնիւ, երկու ներկայացումներին էլ թատրոնը համարեալ թէ դատարկ էր: Ըստ երևոյթին դերասանները պէտք է կենդանացնէին երևանցիների թմրած և մեռած կեանքը, բայց մենք տեսնում ենք բոլորովին հակառակը: Ձանձորթով չէ կարելի այդ բացատրել, որովհետեւ տալեկան 8—10 ներկայացում չեն կարող ձանձորացնել մինչև անգամ բոլոր այդ ներկայացումները յաճախողներին, ուր մնաց նրանց, որոնք ութը կամ տասը ներկայացումներից յաճախում են միմիայն երկուսը կամ երեքը: Իսկ դուք տեսէք, թէ ինչքան պահանջող են նրանք դէպի դերասանները: Աստուած մի արասցէ, որ դերասանը մէկ անգամ չիմանայ իր դերը. էլ ինչ անբաւականութիւն, գանգատներ ասէք թափում են խեղճ դերասանի գլխին: Այդ պարոնները ի նկատի չեն առնում, որ շատ անգամ լաւ դերասաններն անգամ չգիտեցին եւս մեռնում իրանց դերերը, երբ, դուրս գալով բեմ, նրանք տեսնում են, որ դահլիճում շատ քիչ հանդիսականներ կան:

Մի քանիսը իրանց բացակայութիւնը բացատրում էին նրանով, որ չը գիտէին թէ եկել է դերասանական խումբը. զարմանալի բան է, տարին մէկ անգամ քաղաքը յաճախում են քիչ թիւ յայտնի դերասաններ և քաղաքացիք չը գիտեն այդ բանի մասին. օրինակելի հետաքրքրութիւն...: Իսկ շատերը իրանց բացակայութիւնը բացատրում են նրանով, որ ժամանակ չունեն. միթէ աչակերանները կարող են իրանց քննութիւնների ժամանակ միջոց գտնել և յաճախել ներկայացումներ, իսկ մեր վաճառականները և ինտելիգենտները այդ չեն կարող անել:

Բայց մենք թատրոնի դահլիճի դատարկ լինելու պատճառը տեսնում ենք ոչ թէ չը գիտենայու, կամ ժամանակ չունենալու մէջ, այլ նրանում, որ մեր պարոնները աւելի յարգում են

նրանք կանաչ սեղանի շուրջը մինչև ժամի 2—3, իսկ տիկիները և օրիորդները—նստել տանը և բաժնաւոր սրահներում, քան թէ մինչև ժամի 11 լինել թատրոնում:

Յուսով ենք որ, վերջապէս, երևանցիք կը սթափվեն իրանց բնից, ամենքը կ'իմանան դերասաններին գալու մասին և, թողնելով իրանց սովորական ժամանակ անց կացը, կը սկսեն կանոնաւոր կերպով յաճախել բոլոր ներկայացումները:

Յաճախող

ՆԱՄԱԿ ԽՐԱՎԱԳՐՈՒԹԵԱՆ

Իզդիր, մայիսի 16-ին

Խնդրում եմ թող տաք «Մշակի» միջոցով յայտնել, որ շնորհակալութեամբ ստացայ պ. Ս. Զեյնիսկուց «Գեանանուշ», «Պատուաստ» և «Ջորի» գրքոյնից 82 օրինակ՝ գրագէտ գիւղացիներին և ծրի բաժանելու, և տարածելի հետեւի կերպով—1) Կողբ գիւղում, տիկին Իսկուհի Տէր-Յովհաննիսեանի միջոցով, 9 օրինակ: 2) Արիզամարու գիւղում, ինքն անձամբ, 12 օրինակ: 3) Հախվադիւղում, պ. Երուսէմ Մելիք-Ստեփաննոսեանի միջոցով, 6 օրինակ: 4) Իզդիրում, պ. Ռուբէն Օսանյանեանի միջոցով, 16 օրինակ: 5) Խաչալու գիւղում, պ. Արշակ Մելիք-Առաքելեանի միջոցով, 9 օրինակ: 6) Իզդիր-Մարտիկում, տէր Սեդրուկ քահանայ Շաւարշեանի միջոցով, 11 օրինակ: 7) Բէարու գիւղում, տիկին Եղիշեանի Տէր-Յովհաննիսեանի միջոցով, 9 օրինակ: 8) Բլուրում, պ. Օսանյան Կասաբեկեանի միջոցով, 10 օրինակ:

Յովհաննիսեան Խաչապետեան

ՆԱՄԱԿ ԼՈՒՐԵՐ

Ռուսաց սինոդը, համակրելով գիւղատնտեսութեան գիտելիքների տարածման, որոշել է ծխական եկեղեցական այն դպրոցներում, որոնք յարմարութիւն ունեն, ամօրնել գիւղատնտեսական պարագիծները, իսկ սեմինարիաներում կարգաւ աշակերտների համար յատուկ դասախօսութիւններ գիւղատնտեսութիւնից և կաղձակերպել նրանց համար գործնական պարագիծներ օրինակելի դաստակերտներում:

Ստացանք 1) Պ. Պաշկանցի՝ «Մեր Խնչոն» դրոյցը, որ բաղկացած է փոքրաթիւ 24 երեսներից: Տպված է Քիֆիսում: 2) Ն. Լաւրյանի՝ «Ձանգեղութիւն դաւաճողից», որ արտատպված է Աղզագրական Հանդէսից. գրքը բաղկացած է 116 մեծաթիւ երեսներից և արժէ 50 կոպէկ:

Թիֆլիսի քաղաքային դռման իր մայիսի 17-ի նիստում որոշեց հրապարակել շինութիւնների և սալաշատակեան գործերի վրա հակելու համար ինժեներ, յատկացնելով նրան իւրեւ ռոճիկ 4200 ռուբլի:

Ուղեկ վարչութիւնը, որ գնել է իշխան Բագրատիօն-Մուխրանսկու կալուածքը, սկսել է կարգի բերել հաղորդակցութեան ճանապարհները և հողեր պատրաստել այգեգործութիւնը ընդարձակելու նպատակով:

ՊԵՏԵՐԲՈՐԳԻՑ մեզ գրում են. «Մայիսի 12-ին, Պետերբուրգի դիւնուսական ակադեմիայում բժ. Ա. Յակոբեանց, պաշտպանելով իր ներկայացրած դեմոստրացիան «Բիմիական հետադոտութիւններ Բորժովի հանքային ջրերի», բուռն ծախահարուստութիւններից յետոյ արժանացաւ ստանալ բժշկապետի աստիճան»:

ԱՆԱԿԱՎԱՍԿԻՑ մեզ գրում են. «Մեր քաղաքային վարչութիւնը պատրաստվում է որոշ մասնակցութիւն ունենալ Պուշկինի ծննդեան 100-ամեակը տօնելու մէջ. առ այժմ բերել է տալիս Տիխոմիրովի հրատարակած «Ա. Ս. ՍլուժԵՆԻ» անունով գրքոյնից 400 օրինակ, որ տօնի օրը պէտք է ձեռք բաժանէ ռուսամասերին աշակերտութիւններին և աշակերտներին»:

ԲԱՆԱԿԱՎԱՍԿԻՑ մեզ գրում են, մայիսի 14-ից, Վրէլի երեկոյեան, ժամի 8-ին, մի սարսափելի հրդեհ տեղի ունեցաւ Սաբուշիում, երկվորյակ յայնի կայարանի դէմ ու դէմ եղող ըլլակի վրա: Հրդեհը սկսվեց Մնացականովի նաւթահանքից, ուր նաւթահան ժայռակայի և չիլիկ ընդհարումից կայծ էր առաջացել: Մօտ կէս ժամվայ ընթացքում 16 նաւթահան կրակի ճարակ դարձան իրանց մեքենաներով: Ամենից շատ վնասվողը եղաւ «Сочастник» ընկերութիւնը, որից այրվեց 7 նաւթահան, «Вотан» ընկերութիւնից—3 հոր, «Россия» ընկերութիւնից—2 հոր, Տէր-Յակոբեանից—2 հոր, Փիթոնի և ընկ. 1 հոր և Մնացականեանից 1 հոր: Տասն

և վեց նաւթահանքից 5 հատ միայն նաւթ էին տալիս, իսկ մնացածները փորվում էին, ուր և փչացան բաղաժախ փորից դործիքներ, որոնք մեծ մասամբ կապալառւներին են պատկանում: Հրդեհը մեծ ծաւալ կը ստանար, եթէ ամբողջ օրը փչող հիւսիսային քամին չընդհատվէր: Մինչև առաւօտեան ժամի տասը այրվում էին «Сочастник» ընկերութեան և Տէր-Յակոբեանի նաւթային փոքրիկ ամբարները: Մարդկային զոհեր ըստ երևոյթին տեղի չեն ունեցել:

ԳՐԻՍԻՍԻՑ մեզ գրում են, ապրիլի 21-ից, «Տեղիս դպրոցների չքաւոր աշակերտների օգտին տեղական թատերասերները մի ներկայացում տուին պ. Հայրապետ Մինասեանցի դահլիճում: Ներկայացրին «Մարդի կտակը», «Տէյօրի թուգը» և «Կրթվելու» վերջվիները: Ներկայացումը սպասածից աւելի աշող անցաւ: Վերջ խաղացին «Կրթվելու» վերջը, որը մեր հասարակութեան շատ դուր եկաւ. նախ այն պատճառով, որ գրուածը Նիւթը վերցրած է մեր իրական կեանքից և երկրորդ, որ լեզուն մատչելի էր հասարակութեան, որի մէջ կային ռուսներ, հայեր և թուրքեր, որոնց բոլորին էլ հասկանալի էր խաղը: Երբ Աղա-Մուրադի դերում դուրս եկաւ պ. Իս. Խօջանցի և կէկէի Պօղոսի դերում պ. Գ. Պարոնեանց՝ ամբողջ հասարակութիւնը իր ուշադրութիւնը դարձրեց նրանց վերաւայնքին լաւ էին խաղում: Երեսայի դերում տիկին Աննա Միրօնովա իր շնորհալի խաղով դրուեց հասարակութեան ուշադրութիւնը: Ներկայացման վերջը հանդիսականները պատուեցին սիրողներին բուռն ծախահարուստներով: Հանդիսականներին թիւ տեղիս համեմատելի չէր. համարեա ամբողջ դահլիճը լի էր հետաքրքիր հանդիսականներով. նրանց մէջ կային դասաւագետներ, բազմաթիւ բարձրագիւր պաշտօնականներ և զանազան անձինք հասարակութեան բոլոր խաւերից: Մուտքը եղաւ 103 ռուբլի 20 կոպէկ, որից ծախք 56 ռուբլի 83 կոպէկ, իսկ զուտ արդիւնք՝ 46 ռուբլի 37 կոպէկ: Առանձնապէս շնորհակալութեամբ արժանի է կարգադրել պ. Գ. Պարոնեանց, որը ամեն ջանք գործ էր դրել թէ թոյլտութեան իրաւունքը ստանալու (որ երեք ամիս տուեց), թէ բեմը զարդարելու և թէ այլ բազմաթիւ արգելքների առաջին առնելով՝ ներկայացումը աշողեցնելու համար: Նաև պ. Հայրապետ Մինասեանց, որը իր յօժար կամքով ներկայացման համար ձրի տուեց տեղիս ամենայնաբար դահլիճը և երկու սենեակ: Ուրախալի է մի այսպիսի միջոցաւարական երևոյթ Գրիսի նման մի խուլ տեղում: Խրախոյս արժանի է թատերասերների եռանքը և շատ ցանկալի է, որ տարէնը գտնէ մի քանի անգամայայտի ներկայացումներ արվեն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՏԱԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, մայիսի 5-ին

Նրբ մի օր և ինչ հաջ օտոիկ է ժողովրդի սըրտին և արժարժվում է ժամուկի մէջ՝ շատ չուտով արձագանք է գտնում ժողովրդի մէջ. օրինակ ալքօհոլի վնասակարութիւնը: Մշակի վերջին համարներում այդ մասին յօդուածներ կային, որոնցով առաջարկվում էր կուռն այդ ախտի դէմ: Արժանում եմ, որ այդ առաջարկութեան հիման վրա էր, որ տեղիս «Լսարանական» ընկերութիւնը պատրաստել էր մի դասախօսութիւն ալքօհոլի վնասակարութեան մասին, որ առնված էր Եւրոպայի յայտնի բժիշկների կարծիքներից և նրանց խօսքած դասախօսութիւններից, այդ ախտի դէմ կուռնում համար:

Գասախօս-դոկտոր Փաշայեանը, դասախօսութիւնը վերջացնելուց յետոյ, մի քանի խրատներ տուեց ողբից բնական գործ ածողների համար, առաջարկելով—անօթի փորով չը խմել, քիչ խմել, ճաշին չը խմել, խմելից ջրախառն և ընտիրել խմել և այլն, որից յետոյ հրաւիրեց ունկնդիրներին (որ թուով բազմաթիւ էին) մի հակաալքօհոլականութեան ընկերութիւն կազմել մի քանի պայմաններով, որոնցից գլխաւորներն են—բնաւ երբեք ողբից ըմպելիք չը գործածել, պրօպագանդա անել ընդդէմ ալքօհոլի, համոզել ընտանիքին, բարեկամներին, ծանօթներին՝ ընդունել ընկերութեան պայմանները, ով դրժէ իր խոստումը՝ վունդել ընկերութիւնից, խելի նրա հետ ամեն յարաբերութիւն և նրան համարել կամքից զուրկ:

Ներկայ եղողներից ընկերութեան անդամ գրվելին թուով մօտ 22 հոգի, որ բաւական մեծ թիւ է, եթէ ի նկատի առնենք Թաւրիզի ժողովրդի հակումը դէպի ողբից ըմպելիքները: Իսկ խմողների համար, որոնք սովորած լինե-

լով անկարող են վերջ տալ խմելուն՝ առաջարկեց հիմնել ժովկարական ընկերութիւն, որ աշխատի չափաւորել իր գործածելիք ըմպելիքը: Վերջին միտքը չիրագործվեց:

Ճարրօ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Մայրաքաղաքի լրագրիները հաղորդում են, որ Պարիզում հրատարակվող «Arménie» լրագրի խմբագիր Մինաս Զէրազ գնաց Հաագա, որպէս պատուիրակ Բոլցարիայի հայկական կոյունիայի, և անգլո-ամերիկացիների ժողովում մի ճառարտասանեց, որի մէջ ապացուցանում էր, թէ կոնֆէրենցիան կարելի է համեմատել սրով ջրին հասցրած հարուածին, եթէ որ նա չը լուծի էլ՝ զատ-լուտարիզական, հայկական և մակեդոնական հարցերը, որոնք ստիպում են Եւրոպային սպառազինված մնալ: «Temps» լրագիրը հաղորդում է, որ Զէրազը յանձնեց կոնֆէրենցիայի նախագահին մի յիշատակագիր, որի մէջ նկարագրված են թիւրքերի և քրիզերի կատարած դադաւութիւնները հայկական նահանգներում:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

17 մայիսի

ՀԵԼՍԻՆԳՓՈՐՍ: Արտակարգ սէյմի պաշտօնական փակման հանդէսը տեղի կունենայ երեքշաբթի:

ՊԱՐԻՑ: Դրէյֆուսի դործը: Նիստը բացվեց 12 ժամ 5 րոպէին: Ներկայ են մի քանի տիկիներ, որոնց թուում և տիկին Գաղամար: Ներկայ եղողների թուում գտնվում են՝ Ժօրէս, Տըրարի, Բէրանժէ, Լէպլէ, դատաստանական վարչութեան անդամներից շատերը: Բալո-Բօպրէ, գերեզմանական լուսթեան մէջ, կարդում է իր զեկուցումը:

ՊԱՐԻՑ: Բալո-Բօպրէ նախ և առաջ յիշեցնում է այն պայմանները, որոնց մէջ սկսվեց 1894 թւի դործը, շնորհիւ էկսպերտներին միմեանց հակասող զեկուցումների, և ապա առաջ է բերում Դրէյֆուսի խօսքերը իր անմեղութեան մասին, նրա իսկական խօսքերը դէպի Անրին՝ «Այդ զուրկ մեղադրանքը մեռցնում է իմ կեանքը: Պէտք է դէպի ինձ արդարադատ լինել: Անրի պատասխանել է, որ նա այդ բանի մէջ հեղինակաւոր չէ համարում իրան:

ՊԱՐԻՑ: Բալո-Բօպրէ կարդում է այն հարցերը, որոնք առաջարկված են եղել Դրէյֆուսին: Մեղադրվողը շարունակում էր հերքել այն, թէ նա ունեցել է որ և է յարաբերութիւն մի որ և ինչ օտարերկրեայ զեկուցանատան հետ և հաղորդել է դօկումենտներ, որոնք վերաբերվում լինէին երկրի պաշտպանութեան: Զեկուցանողը նկարագրում է թիւրաբու լուսթեան վերաբերեալ այն տեսարանը, որ տեղի է ունեցել զինուորական միւնիստրութեան մէջ, Պատի դէպի մի անհեկում և Կօշիքի ներկայութեամբ: Պատի ասելով, ձեռքի նմանութեան առիթով Դրէյֆուս ասել է նրան. «Նմանից յափշտակել են իմ ձեռքը: Զինուորական դատարանի դեկուցանող Դօրմեյկին Դրէյֆուս ասել է. «Ահա արդէն վեց շաբաթ է, որ ինձ դադունի բանտարկութեան են ենթարկել: Նրդվում եմ, որ ես մեղաւոր չեմ: Լինելով ինքն էլզապի, ես ամեն բանից հրաժարվել եմ, որպէս զի ծառայեմ միայն Պրանսիային: Այն տառնալիքները, որն ես կրում եմ, սարսափելի են»:

ՀԱԱԳԱ: Կօնֆերենցիայի բերօն հրատարակեց անցեալ շաբաթվայ յանձնաժողովի աշխատանքների պաշտօնական հաղորդագրութիւնը, որը հաստատում է արդէն այդ առիթով ստացված տեղեկութիւնները: Հաղորդագրութիւնից երևում է, որ երբորը յանձնաժողովը որոշել է, նախ քան քննութեան առնել Ռուսաստանի առաջարկութիւնը՝ միջնորդութեան և միջնորդ դատարանի վերաբերմամբ, և Անգլիայի, Ամերիկայի և Իտալիայի մի և նոյն հարցի մասին թով առաջարկութիւնները, նշանակել մի երկրորդական յանձնաժողով, որը ստուգէ և համեմատէ այդ դանազան առաջարկութիւնները:

ՊԱՐԻՑ: Ժամի 11-ից սկսւում են ժողովից շարադարադատութեան պալատում վկաները և խմբագրիները: Միտութեան թէ դուրս և թէ ներսը ձեռք են առնված նախազգուշութեան խիստ միջոցներ: Պալատի շուրջը հետաքրքրողներ սակաւ են, բայց պալատի մէջ սկսվում է կենդանութիւն՝ ամեն կողմից խմբվում են փաստաբաններ և խմբագիրներ: Վճռալինի առտեանի դռները բացվեցան 11 ժամ 30 րոպէին: Ոչ մի միջնադէպ չը պատահեց:

ՊԱՐԻՑ: «Figaro» լրագրում տպված է Դէրուլէի և Գաբրիլի դէմ մեղադրական ճառը: Զառու մէջ բերված է փետրվարի 11-ին տեղի

